ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

___ նոյեմբերի 2021 թվականի №___
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ԳՅՈՒՂԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ №34 ՏԱՆ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ՝ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնալիճ գյուղի Շահումյան փողոցի №34 տան (այսուհետ՝ Առանձնատուն) սպառման համակարգի՝ էլեկտրական ցանցին միացումն առանց միացման վճարի գանձման իրականացնելու վերաբերյալ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի հոկտեմբերի 18-ի №Ե-613-21 գրությունը,

բ) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնալիճի գյուղապետարանի 2021 թվականի հունիսի 28-ի տեղեկանքը, որի համաձայն՝ քաղ. Ռուզաննա Սարոյանը (այսուհետ՝ Դիմող անձ) բնակվում է Առանձնատանը,

գ) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքի սոցիալական աջակցության տարածքային գործակալության 2021 թվականի հունիսի 25-ի №674 տեղեկանքը, որի համաձայն՝ Դիմող անձը հաշվառված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում, և նրա ընտանիքի անապահովության միավորը կազմում է 39.49,

դ) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի նոյեմբերի 4-ի №Ե-669-21 և Դիմող անձի 2021 թվականի նոյեմբերի 9-ի գրությունները, որոնց համաձայն վերջիններս չեն առարկում Առանձնատան սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացումը սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով իրականացնելուն,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 13.8 կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Սահմանել, որ Առանձնատան սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացնելու դեպքում միացման վճար չի գանձվում:
2. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ չի թույլատրվում Դիմող անձից պահանջել կատարել վճարումներ, տրամադրել հատուցում, ներկայացնել տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրան ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով, այլ նորմատիվ իրավական ակտերով, սույն որոշմամբ կամ էլեկտրամատակարարման պայմանագրով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դիմող անձին և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
___ նոյեմբերի 2021թ.